ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ն. Հ. ՕՀԱՆՅԱՆ

Հովհ. Թումանյանը մեծապես օգտվել է համաժողովրդական լեզվի դարձվածների անսպառ հարստություններից։ Նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ դարձվածների հանդեպ, որոնք խոսքն օժտում են պատկերավորությամբ, արտահայտչականությամբ ու ժողովրդայնությամբ։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում դարձվածների կառուցվածքային տիպերի ուսումնասիրությունը։

Ըստ խոսքիմասային պատկանելության, դարձվածները բաժանվում են չորս խմբի՝ անվանական, բայական, մակբայական և եղանակավորող։ Անվանական դարձվածներն էլ իրենց հերթին խմբավորվում են գոյականական և ածականական։

Գոյականական դարձվածի գերադաս անդամը անպայման գոյական է՝ լրացված մեկ կամ մի քանի բառով։ Ըստ բաղադրիչների կազմության եղանակի, գոյականական դարձվածները բաժանվում են երկու խմբի՝ համադասական, ստորադասական և համաստորադասական[1]։

Ստորադասական կապակցություններով անվանական դարձվածները այնպիսի կառույցներ են, որոնց բաղադրիչները իրար նկատմամբ գտնվում են լրացում-լրացյալ հարաբերության մեջ։

Անվանական դարձվածները խոսքի մեջ կատարում են շարահյուսական այն պաշտոնները, ինչ որ գոյականները և ածականները։

Համադասական գոյականական դարձվածների բաղադրիչները կարող են կապակցվել ու շաղկապով կամ առանց դրան՝ գծիկով։ Օր.՝

Բաց արին մեջտեղն արձակ գլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Անել ու ջանել իրարով անցան[2]։

—Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ or ու արև, կյանք ու ջան որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի՛ որդի, դավաճա՛ն որդի... (հ. 2, էջ 62)։

Հետևյալ օրինակում դարձվածների բաղադրիչների միջև գոյություն ունի ստորադասական, այսինքն՝ լրացում-լրացյալի հարաբերություն։

—Դու գնա, պա՛պի, միամիտ քընիր,
Ես աչքի լուսը կըհանեմ գողի... (հ. 2, էջ 38)։

Պետք է նշել նաև, որ գոյականական դարձվածի բաղադրիչ հանդիսացող գոյականը մեծ մասամբ հոլովման հարացուցային ձևեր չի ունենում, այն կարող է հանդես դալ որոշակիորեն կա՛մ եզակի և կա՛մ հոգնակի թվով։ Շատ քիչ են այն դարձվածները, որոնց գերադաս գոյական անդամը կարող է դրվել միաժամանակ և՛ եզակի, և՛ հոգնակի թվով։ Երբեմն թվի քերականական կարգը կարող է իմաստազատիչ դեր կատարել։ Այսպես՝ եզակի բա-

1 Ա. Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1956 էջ 52։

2 Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1951, էջ 58 (հետագա օրինակներում հատորը և էջը կնշվեն բնագրին կից)։

ղադրիչով գերադաս գոյականը հոգնակի թվով գործածվելիս կարող է կորցնել իր դարձվածային իմաստը և վերածվել սովորական կապակցության։ Նույն երևույթը կարող է լինել, երբ որոշակի հոլովով կիրառվող գոյականը գործածվում է մեկ այլ հոլովով, որը բնորոշ չէ տվյալ դարձվածի համար, այն վերածվում է սովորական կապակցության։ Կան դարձվածներ էլ, որոնք կարող են գործածվել միաժամանակ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով։ Բերենք մի քանի բնագրային օրինակ, ուր գերադաս անդամը՝ գոյականը, կապակցվում է ածականի, թվականի, դերբայի, կապերի և կապական բառերի հետ։

Գոյական + ածական

Բարով տեսանք, հազար բարի,
Հազար բարում դուք կենաք,
Տուներդ շեն, սիրտներդ լեն
Միշտ էլ ղոնախ ոնենաք (հ. 1, Երևան, 1951, էջ 514)։

Ածական + գոյական

Էն սև օրը, որ մենք տեսանք,
Քո թշնամին թող չըտեսնի... (հ. 1, էջ 345)։

Գոյական + գոյական

— Դուրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգամ,
Ես ու սուգ լինի թագ ու պսակըդ (հ. 2, էջ 64)։

Թվական + գոյական

Սասմա սարերից շա՜տ ու ջատ հեռու
Թընդում էր ներա հրոչակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր,
Հազար բերան էր—մի Առյուծ-Մհեր (հ. 2, էջ 103)։

Բերված օրինակում օգտագործված է գոյական+քանակական թվական կառույցը։ Այսպիսի կառուցվածքներում կարող են գործածվել նաև դասական թվականներ։

Դերբայ + գոյական

Այսպիսի կառույցներում հիմնականում գործածվում են ենթակայական և հարակատար դերբայները։ Սրանցում առկա է որոշիչ-որոշյալի կապակցությունը, և դերբայը սովորաբար դրվում է նախադաս։ Ավելի լայն տարածում ունեն գոյականով և հարակատար դերբայով կառույցները. հարակատարը ավելի է օժտված հատկանիշ արտահայտելու առանձնահատկությամբ։

Աղջի, քու յարն եկավ, անցավ,
Վառված, տարված քու սիրով,
Էրված ջիգյարն՝ եկավ անցավ
Չհովացավ պաղ ջրով... (հ. 2, էջ 51)։

Հանդիպում են նաև գոյական+կապ կամ կապական բառ տիպի կառույցներ, ինչպես՝

—Գըլխիս վըրա, ասավ, իմ տեր,
Գընամ հիմի քանդեմ Սասուն (հ. 2, էջ 114)։
Աչքիս վրա, քեռի Քուչի,
Մի գդակ ա, հո մի քուրք չի (հ. 1, էջ 265)։

Անվանական դարձվածների մյուս խումբը ածականական դարձվածներն են։ Սրանք խոսքի մեջ կատարում են այն շարահյուսական պաշտոնները, ինչ որ ածականները։ Դրանք վերաիմաստավորված կերպով բնութագրում են այն առարկան կամ անձը, որի վրա դրվում են, հիմնականում որոշում նրա որակական հատկանիշը։ Իբրև առանձնահատկություն, նշենք, որ պար-

տարբեր չէ ածականական դարձվածի գերադաս սնդամի ածական լինելը, այն կարող է կազմվել նաև առանց ածականի, երկու գոյականների, գոյականի և ածականի, գոյականի ու դերբայի կապակցությամբ կամ համադրությամբ։

Ածական + գոյական

Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան հերագ,
Որը ինն է թողել էնտեղ
Աչքը համփին, խեղճ ու կրակ (հ. 2, էջ 126)։

Ածական + գոյական + ածական

Ինում է՝ իբրև գյուղացի մի մարդ,
Աղբատ, օրական ռուբուստի կարոտ (հ. 1, էջ 319)։

Ածականական դարձվածներ կարող են կազմվել երկու ածականների համադրությամբ, որոնք համադասական կապակցություններ են՝ իրար միացած ու շաղկապով կամ էլ գծիկով։

Ախսո՞ս, Անո՞ւշ, սարի ծաղիկ,
Ախսո՞ս իգնթ քու յարին.
Ախսո՞ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ախսո՞ս էդ ծով աչքերին... (հ. 2, էջ 45)։

Գոյական + ածական

Ես որբ աղջիկ եմ եղբայրներ ունիմ,
Նրրանք էլ աղբատ, ձեռքները պակաս,
Չեն կարող էսքան հարկ տան արաբին (հ. 2, էջ 252)։

Գոյական + գոյական

Եկած կը լինի, որ խաբար տանի,
Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա,
Ով յուր դռանը անասուն ունի,
Կամ որի կնդա աչքերում յուղ կա (հ. 2, էջ 34)։

Գոյական + դերբայ

Այս կառույցում հիմնականում հանդես է գալիս հարակատար դերբայը, այն էլ միշտ հետադաս։

Կար զորքի մեջ մի ալեոր,
Աշխարհք տեսած ու բանագետ,
—Տղերք ասավ, ճամփա տրվեք,
Գընամ խոսեմ ես Դավթի հետ (հ. 2, էջ 125)։

Գոյական + թվական

Երկյուղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից (հ. 1, էջ 192)։

Ածականական դարձվածները հանդես են գալիս գրեթե շարահյուսական նույն պաշտոններով, ինչ որ ածականները։ Կարող են լինել որոշիչ, ձևի պարագա, ստորոգելի և այլն։

Բայական դարձվածները անվանականների համեմատությամբ շատ են, և բայերի քերականական կարգերի հարատության և կառուցվածքային տեսակների բազմազանության շնորհիվ քանակապես գերակշռում են։ Մեծ է

նաև բայի կապակցելիությունը։ Բայը կարող է կապակցվել բոլոր խոսքի մասերի հետ, ստեղծելով բազմապիսի դարձվածներ։ Բայական դարձվածների առատությունը պայմանավորվում է նաև նրանով, որ հայերենը չափազանց հարուստ է հարադիր բայերով, որոնք դարձվածի ստեղծման աղբյուր են։ Բայական դարձվածներում կառույցի գերադաս անդամը բայն է։ Բայական դարձվածները ևս իրար նկատմամբ ունեցած շարահյուսական կախվածության տեսակետից բաժանվում են 3 խմբի՝ համադասական, ստորադասական և համաստորադասական[3]։

Մ. Աբեղյանը սովորական հարադիր բայերի և դարձվածային հարադիր բայերի տարբերակիչ հատկանիշ է համարում այն, որ վերջիններս հոդ չեն ստանում։ Ալ. Մարդարյանը գտնում է, որ բազմաթիվ դարձվածային հարադիր բայեր առաջ են եկել բառերի սովորական շարահյուսական կապակցություններից՝ դրանց շարահյուսական կապի մթագնման և ընդհանուր նշանակություն ստանալու ճանապարհով[4]։ Նա նշում է. «Դարձվածային են կոչվում այն հարադիր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ նշանակություն են արտահայտում և հանդես են գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»[5]։

Բայական դարձվածները կարող են ունենալ հետևյալ կառույցները՝

1. Գոյական+բայ

Բայց փաշան նրան էլ ականջ չարավ,
Զարկեց ու կտրեց գլուխը ճերմակ (հ. 2, էջ 247)։

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զրկվի, ով կռիվ անի (հ. 2, էջ 37)։

Գոյական+բայ կառույցներում գոյականը կարող է հանդես գալ ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվերով, հոլովման տարբեր հարացույցներով, ստանալ հոդ և այլն։ Բայը հանդես է գալիս եղանակաժամանակային տարբեր ձևերով։

2. Թումանյանի երկերում հանդիպում են նաև հարադրական բայերով և գոյականով կազմված դարձվածների բազմաթիվ օրինակներ, որոնք խոսում են հարադրական բայերի դարձվածներ կազմելու մեծագույն հնարավորությունների մասին։

—Մո՜սի ջան, Մո՜սի, գբլխովրդ շուտ գամ,
Ինձ մի՜ ըսպանիր, ինձ թող էս անգամ (հ. 2, էջ 60)։

Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՜յ կանչելով՝ փախավ տուն ընկավ (հ. 2, էջ 120)։

Բացի գոյականներից, ածականները նույնպես կարող են կապակցվել բայ գերադաս անդամի հետ և կազմել բայական դարձվածներ, այս դեպքում ածականի խոսքիմասային իմաստը կարծես չեզոքանում է։

Ածական+բայ կաղապարով դարձվածի օրինակ՝

Տեսե՞լ ես արդյոք այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում,
Որից դատարկ են նըստում տերերը,
Որ միշտ ցեցերի գըրպանն է լըցնում (հ. 1, էջ 160)։

---

3 Ե. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 162։
4 Ալ. Մարդարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 222։
5 Նույն տեղում, էջ 225։

Ավելի փոքր թիվ են կազմում մակբայներով, երբեմն էլ կապական բառերով ու բայով զուգորդվող բայական դարձվածները։

Մակբայ+բայ

Եկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տրվավ մարդկանց գրցեց դես ու դեն (հ. 2, էջ 107)։

Կապ+բայ կամ կապ+կապվող բառ+բայ

Հավաքվում են, շուրջը պարում,
Մեջն են ընկնում խեչագար.
Ասում են, թե էն Փարվանա
Ջահելներն են սիրավառ (հ. 1, էջ 296)։

Այս ձորերում էր, որ Բաղրատունին
Բախտի հետ խաղաց յուր խաղը վերջին (հ. 2, էջ 320)։

Պետք է նկատել, որ Թումանյանի ստեղծագործություններում հանդիպում են նաև եռանդամ, քառանդամ բաղադրիչներով բայական դարձվածներ։ Դրանք կարող են լինել երկու համադաս գոյականներ կամ այլ խոսքի մասեր՝ ստորադասված գերադաս անդամ բային կամ էլ գերադաս անդամին ստորադասված բառը (լրացումը) կարող է ունենալ իր լրացումը՝ գոյական, ածական, դերանուն և այլն։

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտրվեց ան ու վախից (հ. 2, էջ 135)։
Հույսը հատավ... ու լաց եղավ,
Էնքան արավ լաց ու կոծ,
Որ լիճ կըտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց (հ. 1, էջ 296)։

Այսպես մոլորված հենց վեր եմ կենում,
Ականջըս հանկարծ մի ձայն է ընկնում (հ. 2, էջ 340)։

—Չէ՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ բրի տակով (հ. 2, էջ 104)։

Վերջին երկու օրինակներում բայ գերադաս անդամի և դարձվածի մյուս բաղադրիչների միջև գոյություն ունի ստորադասական հարաբերություն։

Մակբայական դարձվածներ

Մակբայի արժեք ունեցող դարձվածները կառուցվածքային տեսակետից բազմազան են։ Դրանք հանդես են գալիս մակբայներին բնորոշ շարահյուսական բոլոր պաշտոններով, այսինքն կարող են լինել ձևի, ժամանակի, տեղի, չափի ու քանակի և այլ պարագաներ։ Սրանք կազմվում են հետևյալ կերպ.

1. Գոյականի ուղիղ (նաև թեք) հոլովաձևերով՝
Ընկերն էնտեղ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիզը ծռած,
Համրում է օրն օրի վրա
Թե՝ մեր ճայը ե՛րբ պիտի գա (հ. 1, էջ 269)։

2. Երկու բայերի զուգորդումով՝

Թե ի՞նչ բան է խեղճ գյուղացուն
Գերի շինել՝ ողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել
Այրու պղինձն աճուրդ անել... (հ. 2, էջ 94)։

3. Կապով ու կապվող բառով կազմված կապակցություններով՝

Իմ աչքերն անթարթ ձեր նամփի վրա—
Հսկել եմ անքուն ես ձեր գործերին (հ. 1, էջ 143)։

Եղանակավորող դարձվածներ

Եղանակավորող դարձվածները եղանակավորում կամ երանգավորում են խոսքը, ասելիքը։ Դրանք ունեն հուզարտահայտչական բնույթ ու ճնշող մեծամասնությամբ հարաբերակից են նախադասություններին։ Եղանակավորող դարձվածների միջոցով խոսողը արտահայտում է տարբեր վերաբերմունք՝ գոհունակություն, բարեմաղթություն, երգում, ափսոսանք, զարմանք, հանդիմանություն, հեգնանք, արհամարհանք և այլն։ Վերաիմաստավորված անեծքներն ու օրհնանքները ևս դասվում են եղանակավորող դարձվածների շարքը։ Իբրև առանձնահատկություն պետք է նշել, որ մեծ մասամբ եղանակավորող դարձվածների բայ բաղադրիչը դրվում է ըղձական եղանակով։ Եղանակավորող դարձվածները հանդես են գալիս հետևյալ կառույցներով.

1. Բայ + գոյական և գոյական + բայ

—Հողե՞մ գլուխդ, ասավ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դավիթը ո՞ւր է քեֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում (հ. 2, էջ 129)։

Տուներդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆըլան-ֆըստան,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՞ս,
Դե զարկելը հիմի դու տես... (հ. 1, էջ 330)։

2. Երկու գոյականների համակցությամբ, *որտեղ գերադաս անդամ գոյականը կարող է ունենալ հոլովման այս կամ այն հարացուցային ձևը, երբեմն էլ կապակցությունը կարող է լրացվել այլ անդամներով։*

Հո՛ղն իմ գլխին, պառավն ասավ
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞ (հ. 1, էջ 594)։

3. Դերբայ + բայ և եղանակավորող բառ + դերբայ

Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր,
Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թե՝ ապրած կենաս, ահեղ թագավոր,
Մեր բանը, հապա՞, էսպես ու էսպես... (հ. 1, էջ 304)։

4. *ա)* Կապ + կապվող բառ

Աչքիս վրա, *քեռի Քուչի*
Մի գդակ ա, հո մի քուրք չի (հ. 1, էջ 583)։

5. Ածական + գոյական

Բարի աջողում, *ուստա Փիսո,*
Գլուխս մըրսեց ի սեր աստծո,
Ա՛ռ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գըլխիս հարմար (հ. 1, էջ 265)։

6. գոյական+բայ+դերանուն
—Վա՜յ Դավիթ, ասավ, մահը տանի քեզ,
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՞ս (հ. 2, էջ 111)։

Թումանյանի ստեղծագործությունների դարձվածների կառուցվածքային տեսակների քննությունը կարևորություն է ստանում հեղինակի ստեղծագործությունների լեզուն, նրա ժողովրդայնությունն ու արտահայտչականությունը բացահայտելու և գնահատելու տեսակետից։

СТРУКТУРНЫЕ ТИПЫ ФРАЗЕОЛОГИЗМОВ В ПРОИЗВЕДЕНИЯХ О. ТУМАНЯНА

Н. Г. ОГАНЯН

Резюме

Фразеологизмы выполняют главную роль в произведениях О. Туманяна, способствуя образности и выразительности его языка.

По структуре используемые в произведениях Туманяна фразеологизмы делятся на четыре группы: номинальный, глагольный, адвербиальный (наречный) и модальный. Особенно часто он обращается к глагольным структурам.